



**60 ԲՆԱԳԱՎԱՌ,  
ՈՒՐ ԳՈՐԾՈՒՄ Է ՄԱԿ-Ը**



Միավորված ազգերի կազմակերպությունն ստեղծվել է ավելի քան 60 տարի առաջ, որպեսզի զերծ պահի հետագա սերունդներին պատերազմներից, պաշտպանի մարդու իրավունքները, պայմաններ ստեղծի արդարության հաստատման համար, խթանի սոցիալական առաջընթացը և բարելավի կենսամակարդակը: Այս հիմնական նպատակները նույնքան կենսական են, որքան սկզբում:

Ձուգահեռաբար, այս վեց տասնամյակի ընթացքում նոր մարտահրավերներ են ծագել. միջազգային ահաբեկչությունից սկսած մինչև կլիմայի փոփոխություն, վարակիչ հիվանդությունների տարածումից մինչև այլ սպառնալիքներ, որոնք ազգային սահմաններ չեն ճանաչում:

Ոչ մի երկիր չի կարող միայնակ լուծել այս գլոբալ խնդիրները: Որպես աշխարհի միակ՝ իրոք համընդհանուր հաստատություն, Միավորված ազգերի կազմակերպությունը մարտահրավերներին կանխավ դիմակայելու գլոբալ գործողություններն աշխուժացնելու լավագույն (եթե ոչ միակ) ֆորումն է:

Սույն գրքույկը համառոտ և կոնկրետ օրինակներով լուսաբանում է Միավորված ազգերի կազմակերպության մինչ այժմ ձեռքբերած որոշ նվաճումներ, և թե ինչպես այն կարող է շարունակել իր անգնահատելի աշխատանքը հետագայում՝ հանուն գալիք սերունդների:

***Բան Կի-մուն***  
***Միավորված ազգերի կազմակերպության***  
***Գլխավոր քարտուղար***



**Միավորված ազգերի կազմակերպությունն** ստեղծվեց որպես կործանիչ պատերազմի արդյունք, որպեսզի կայունացնի միջազգային հարաբերությունները և ստեղծի ավելի հաստատուն հիմքեր խաղաղության համար:

Միջուկային պատերազմի վտանգի և տարածքային չդադարող տարակարծությունների պատճառով խաղաղապահությունը դարձել է ՄԱԿ-ի առաջնահերթ մտահոգությունը, իսկ «Կապույտ սաղավարտավոր» խաղաղապահների աշխատանքը՝ ՄԱԿ-ի գործունեության ամենատեսանելի ոլորտներից մեկը:

Բայց ՄԱԿ-ը շատ ավելին է, քան խաղաղապահ լինելն ու հակամարտությունների կարգավորման ֆորում ծառայելը: Հաճախ, առանց ուշադրություն գրավելու, ՄԱԿ-ը և իր գործակալությունների ընտանիքը զբաղվում են հսկայածավալ աշխատանքներով՝ նպատակ ունենալով բարելավել մարդկանց կյանքը բովանդակ աշխարհում:

Երեխայի գոյատևում ու զարգացում, շրջակա միջավայրի պահպանություն, մարդու իրավունքներ, առողջապահական և բժշկական հետազոտություն, աղքատության նվազեցում ու տնտեսական զարգացում, գյուղատնտեսության զարգացում ու ձկնորսություն, կրթություն, կանանց առաջխաղացում, արտակարգ իրավիճակներից և աղետներից տուժածների օժանդակություն, օդազնացություն և ծովազնացություն, ատոմային էներգիայի կիրառում խաղաղ նպատակներով, աշխատավորների իրավունքներ. այս շարքը դեռ երկար կարելի է շարունակել:

Ստորև նշված են որոշ ձեռքբերումներ, որոնք ունեցել է ՄԱԿ-ը հիմնադրման օրից՝ 1945թ. ի վեր իր բաղադրիչ մարմինների հետ միասին:

# 1 Խաղաղության և անվտանգության պահպանում



Նախորդ 60 տարիների ընթացքում աշխարհի անհանգիստ կետերում 63 խաղաղապահ ու դիտորդական առաքելություններ իրականացնելով՝ Միավորված ազգերի կազմակերպությանը հաջողվել է խաղաղություն հաստատել, որը երկրներին հնարավորություն է տվել բուժել հակամարտության վերքերը: Ներկայումս աշխարհում գործում է խաղաղապահ 17 առաքելություն, որն իրականացնում են շուրջ 88 500 քաջարի տղամարդ ու կին 119 երկրից, որոնք գնում են այնտեղ, ուր ուրիշները չեն կարող կամ չեն ցանկանում գնալ:



## 2 Խաղաղարարություն

1990 թվականից ի վեր շատ հակամարտություններ են դադարեցվել կամ ՄԱԿ-ի միջամտությամբ, կամ էլ ՄԱԿ-ի աջակցությամբ գործող մի երրորդ կողմի գործողությունների շնորհիվ: Այդ թվում՝ էլ Սալվադորը, Գվատեմալան, Նամիբիան, Կամբոջան, Մոզամբիկը, Աֆղանստանը, Սիեռա Լեոնեն, Բուրունդին, և հյուսիս-հարավային հակամարտությունը Սուդանում: Հետազոտությունները փաստում են, որ ամբողջ աշխարհում 1990-ականներից ի վեր ՄԱԿ-ի խաղաղարարությունը, խաղաղապահությունն ու հակամարտությունները կանխելու գործողությունները հիմնական միջոց են ծառայել հակամարտությունների վերացման 40 տոկոսի հիմքում: ՄԱԿ-ի կանխարգելման դիվանագիտությունը և կանխարգելիչ գործողությունների այլ ձևեր չեզոքացրել են շատ անխուսափելի հակամարտություններ: Ի լրումն, ՄԱԿ-ի խաղաղարար առաքելությունը տարածաշրջաններում զբաղվում է հետկոնֆլիկտային իրավիճակներով և ձեռնարկում խաղաղաշինական միջոցառումներ:

### 3 Միջուկային զենքի տարածման կանխում



Շուրջ հինգ տասնամյակ Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ/IAEA) ծառայել է որպես աշխարհի միջուկային զենքի հսկիչ. ԱԷՄԳ փորձագետները վերահսկում են, որ հսկողության տակ գտնվող միջուկային նյութերը օգտագործվեն միայն խաղաղ նպատակներով: Առ այսօր, ԱԷՄԳ-ն անվտանգության համաձայնագրեր ունի 163 պետության հետ:



## 4 Ձարգացման խրախուսում

Միավորված ազգերի կազմակերպությունն իր ուշադրությունն ու միջոցները տրամադրել է համայն աշխարհում կենսամակարդակի բարձրացման և մարդկային հմտությունների ու ներուժի խթանման գործին: 2000 թվականից ի վեր այդ աշխատանքն առաջնորդվում է Հազարամյակի զարգացման նպատակներով (ՀՁԵ/MDG): Իրականում ՄԱԿ-ի զարգացման աջակցության ամբողջ ֆոնդը ստացվում է այն ներդրումներից, որ կատարում են երկրները: Օրինակ՝ ՄԱԿ-ի Ձարգացման ծրագրի (ՄԱԶԾ/UNDP) աշխատակազմը 166 երկրում, օժանդակում է ծայրահեղ աղքատության վերացման, պատշաճ կառավարման գաղափարի խթանման, աղետների դիմակայման և շրջակա միջավայրի պահպանման ծրագրերին: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ/UNICEF) գործում է աշխարհի 155 երկրում՝ հիմնականում երեխաների պաշտպանության, պատվաստումների, աղջիկների կրթության և ՄԻԱՎ/ԶԻԱԳ-ի դեմ պայքարի բնագավառներում: ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (ՄԱԱԶՀ/UNCTAD) օգնում է զարգացող պետություններին լավագույնս օգտվել իրենց առևտրի հնարավորություններից: Համաաշխարհային բանկը վարկեր ու դրամաշնորհներ է տրամադրում զարգացող երկրներին և 1947 թվականից ի վեր աջակցել է ավելի քան 10 հազար զարգացման ծրագրի:

## 5 Հատուկ ուշադրություն Աֆրիկայի զարգացմանը



Աֆրիկյան շարունակում է մնալ Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթ խնդիրներից մեկը: 2001թ. աֆրիկյան պետությունների ղեկավարներն ընդունեցին մայրցամաքի սեփական ծրագիրը՝ Աֆրիկայի զարգացման նոր գործընկերությունը, որը 2002թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվեց որպես միջազգային օգնությունը Աֆրիկա ուղղորդելու հիմնական կառույց: Աֆրիկյան մայրցամաքը ստանում է ՄԱԿ-ի համակարգի զարգացման հատկացումների 38 տոկոսը՝ աշխարհի տարածաշրջանների ամենամեծ բաժինը: ՄԱԿ-ի բոլոր գործակալություններն Աֆրիկայի օգնության հատուկ ծրագրեր ունեն:





## 6 Կլիմայի փոփոխության գլոբալ լուծման որոնումներ

Կլիմայի փոփոխությունը համաշխարհային խնդիր է, որ գլոբալ լուծում է պահանջում: Միավորված ազգերի կազմակերպությունը առաջնային գծում է եղել գիտության օժանդակման ու քաղաքական լուծումների դարբնման ժամանակ: Կլիմայի փոփոխության միջկառավարական խումբը, որը բաղկացած է երկու հազար հայտնի կլիմայի փոփոխության բնագավառի գիտնականներից, կատարում է ընդարձակ գիտական վերլուծություն յուրաքանչյուր հինգ-վեց տարին մեկ: 2007թ. այն հանգեց մի համոզված եզրահանգման, որ տեղի է ունենում կլիմայի փոփոխություն, և որ դրա հիմնական պատճառը մարդու գործունեությունն է: Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի 192 անդամները քննարկում են մի երկարաժամկետ համաձայնագիր, որը միաժամանակ և՛ կառաջնորդի երկրներին նվազեցնելու ջերմոցային արտանետումները, որոնք նպաստում են կլիմայի փոփոխությանը, և՛ կօգնի երկրներին հարմարվել դրա հետևանքներին: ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱՇՄԾ/UNEP) և ՄԱԿ-ի այլ գործակալություններ իրազեկություն բարձրացնելու առաջին գծում են:

## 7 Կլիմայի փոփոխության դիմակայում



ՄԱԿ-ը զարգացող երկրներին օգնում է դիմակայել կլիմայի փոփոխության գլոբալ մարտահրավերներին: ՄԱԿ-ի քսանյոթ գործակալություններ համախմբվել են խնդրի համակողմանի լուծման համար: Օրինակ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՅ/GEF), որը համախմբվել է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրին, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրին և Համաշխարհային բանկին, ֆինանսավորում է զարգացող երկրներին: Որպես Կլիմայի կոնվենցիայի ֆինանսավորման մեխանիզմ, այն տարեկան բաշխում է շուրջ \$250 միլիոն էներգիայի արդյունավետության, վերականգնվող էներգիայի և կայուն տրանսպորտային ծրագրերին:



## 8 Շրջակա միջավայրի պահպանություն

Միավորված ազգերի կազմակերպությունն աշխատում է լուծել համընդհանուր բնապահպանական հիմնախնդիրներ: Որպես փոխհամաձայնության հաստատման և բանակցությունների միջազգային ֆորում՝ ՄԱԿ-ն զբաղվում է այնպիսի հիմնախնդիրներով, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, օզոնային շերտի քայքայումը, թունավոր արտանետումները, անտառների և կենսաբանական տարատեսակների կորուստը, օդի և ջրի աղտոտումը: Քանի դեռ այս հիմնախնդիրները չեն լուծվել, համաշխարհային շուկաներն ու տնտեսությունը չեն կարող տևական կայունություն պահպանել, քանզի բնապահպանական կորուստների հետևանքով քայքայվում է այն բնական «կապիտալը», որի վրա են հիմնված զարգացումն ու մարդկության գոյատևումը:

## 9 Մարդու իրավունքների խթանում



Այն պահից ի վեր, ինչ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1948թ. ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Միավորված ազգերի կազմակերպությունն օժանդակել է քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող տասնյակ բազմակողմանի համաձայնագրերի ընդունմանը: ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմիններին հաջողվել է անհատական բողոքների հետաքննության շնորհիվ միջազգային հանրության ուշադրությունը սևեռել կտտանքների, անհետացման և կամայական ազատազրկման և մարդու իրավունքների այլ խախտումների վրա ու միջազգային ճնշում գործադրել կառավարությունների վրա, որպեսզի բարելավեն իրենց երկրներում մարդու իրավունքների խախտման դեպքերը:



## 10 Ժողովրդավարության խթանում

Միավորված ազգերի կազմակերպությունն օժանդակել և հզորացրել է ժողովրդավարական կառույցներն ու պրակտիկան ամբողջ աշխարհում, այդ թվում՝ օգնելով մարդկանց շատ երկրներում մասնակցելու ազատ ու արդար ընտրություններին: ՄԱԿ-ը ընտրություններին վերաբերող հարցերում մատուցել է խորհրդատվություն և օժանդակություն, իսկ որոշ դեպքերում նաև ընտրական դիտորդներ ապահովել ավելի քան 100 երկրում, շատ հաճախ նրանց պատմության վճռորոշ պահերի ժամանակ, ինչպես օրինակ՝ Կամբոջայում, Էլ Սալվադորում, Մոզամբիկում, Հարավային Աֆրիկայում, Թիմոր Լեստում, Աֆղանստանում, Իրաքում, Բուրունդիում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում և Նեպալում:

## 11 Կանանց իրավունքների խթանում



ՄԱԿ-ի երկարաժամկետ հեռանկարային խնդիրներից մեկի նպատակը եղել է կանանց կյանքի բարելավումն ու սեփական կյանքը կառավարելու առավել լայն իրավունքների ընձեռումը: ՄԱԿ-ը կազմակերպեց պատմության մեջ առաջին Կանանց համաշխարհային խորհրդաժողով (Մեխիկո, 1975թ.), որը ՄԱԿ-ի Կանանց միջազգային տասնամյակի (1976-1985թթ.) ընթացքում կայացած երկու խորհրդաժողովների և Պեկինի համաշխարհային խորհրդաժողովի (1995թ.) հետ մեկտեղ սահմանեց կանանց իրավունքների առաջխաղացման և գենդերային հավասարության խթանման օրակարգ: 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը վավերացվել է աշխարհի 185 պետության կողմից, նպաստեց կանանց իրավունքների խթանմանն ամբողջ աշխարհում:



## 12 Պատերազմի հանցագործների դատապարտում

Դատապարտելով և մեղադրելով պատերազմի հանցագործներին՝ նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով ստեղծված ՄԱԿ-ի քրեական դատարանները օգնել են զարգացնելու միջազգային մարդասիրական և միջազգային քրեական իրավունքը, որն առնչվում է ցեղասպանության ու այլ միջազգային իրավունքի խախտումների հետ: Երկու դատարաններն էլ իրենց ներդրումն են ունեցել տուժած երկրներում և տարածաշրջանում խաղաղության ու արդարության վերականգնման հարցում: Միջազգային քրեական դատարանը անկախ, մշտական գործող դատարան է, որը հետաքննում ու դատապարտում է այն անձանց, որոնք մեղադրվում են ամենալուրջ միջազգային հանցագործություններ կատարելու մեջ (ցեղասպանություն, մարդկության դեմ կատարած հանցագործություններ ու պատերազմի ժամանակ կատարած հանցագործություններ), եթե ազգային ղեկավարները չեն ցանկանում կամ ի զորու չեն կատարել դրանք: Իրադարձությունները Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, Հյուսիսային Ուգանդայում, Սուդանի Դարֆուրի շրջանում և Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում ներկայացվել են դատարան, որն արդեն հաստատել է իրեն որպես քրեական միջազգային արդարադատության համակարգի կենտրոն: ՄԱԿ-ի կողմից հովանավորվող Սիեռա Լեոնեի ու Կամբոջայի դատարանները դատապարտում են այն անձանց, որոնք պատասխանատու են միջազգային իրավունքի լուրջ խախտումների համար, այդ թվում մասսայական սպանությունների ու պատերազմական հանցագործությունների համար:

## 13 Վերջ տալ ռասայական մեկուսացմանը Հարավային Աֆրիկայում



Միավորված ազգերի կազմակերպությունը չափազանց կարևոր դեր խաղաց Հարավային Աֆրիկայում ռասայական մեկուսացմանը (ապարտեիդ) վերջ տալու գործում՝ ձեռնարկելով մի շարք լայնածավալ միջոցառումներ՝ սկսած զենքի նկատմամբ կիրառվող արգելքից մինչև խտրականացված սպորտային խաղերի դեմ ընդունված կոնվենցիան: 1994 թվականի ընտրությունները, որոնց իրավահավասար հիմունքներով մասնակցում էին բոլոր հարավաֆրիկացիները, հիմք դարձան բազմառասայական կառավարության ձևավորման և հաստատման համար:





## 14 Ինքնորոշման և անկախության խթանում

Երբ 1945թ. հիմնադրվեց ՄԱԿ-ը, 750 միլիոն մարդ, այսինքն երկրագնդի բնակչության գրեթե մեկ երրորդը, ապրում էր ինքնորոշման իրավունքից զուրկ, կախյալ գաղութային տարածքներում: Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր խաղաց՝ անկախություն բերելով ավելի քան 80 երկրի, որոնք այժմ ինքնիշխան պետություններ են:

## 15 Միջազգային իրավունքի ամրապնդում



Միավորված ազգերի կազմակերպության ջանքերով մարդու իրավունքների, ահաբեկչության, միջազգային հանցագործության, փախստականների, զինաթափման, առևտրի, սպառնան ապրանքների, օվկիանոսների և այլ շատ հարցերի վերաբերյալ ավելի քան 510 բազմակողմանի պայմանագիր է քննարկվել ու հաստատվել:



## 16 Մարդասիրական օգնության ապահովում փախստականների համար

1951 թվականից մինչ օրս պատերազմի, սովի կամ հետապնդումների հետևանքով ապաստան փնտրող ավելի քան 50 միլիոն փախստական շարունակաբար օգնություն է ստացել ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից (ՄԱՓԳՀԳ/UNHCR), հաճախ ներգրավելով նաև այլ գործակալությունների: ՄԱՓԳՀԳ փորձում է գտնել այդ հիմնահարցի երկարաժամկետ կամ «հուսալի» լուծումներ՝ օժանդակելով փախստականների հայրենադարձության գործընթացին, եթե երաշխավորվում է նրանց անվտանգությունը, կամ էլ օգնելով նրանց ինտեգրվել իրենց ապաստան տրամադրող երկրների կյանքին կամ վերաբնակություն հաստատել որևէ երրորդ երկրում: Աշխարհում այսօր 25 միլիոնից ավելի փախստական, ապաստան որոնող կամ ներքին տեղահանության ենթարկված անձ կա, հիմնականում կանայք և երեխաներ, որոնք ՄԱԿ-ից պարեն, կացարան, բուժօգնություն, կրթություն և հայրենադարձության օժանդակություն են ստանում:

## 17 Օգնություն Պաղեստինի փախստականներին



Մինչ համաշխարհային հանրությունը ձգտում է հարատև խաղաղություն հաստատել իսրայելցիների և պաղեստինցիների միջև, ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալությունը (ՄԱՕԱԳ/UNRWA)՝ մարդասիրական օգնության և զարգացման այդ հաստատությունը, օգնություն է տրամադրել պաղեստինյան փախստականների չորս սերունդների կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, միկրոֆինանսավորման և արտակարգ իրավիճակների օգնության բնագավառներում: Այսօր Մերձավոր Արևելքի ավելի քան 4,4 միլիոն փախստական է գրանցված ՄԱՕԱԳ-ում:



## 18 Սովի ու գյուղական աղքատության նվազեցում նոր զարգացող երկրներում

ՄԱԿ-ի Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (ԳԶՄՀ/IFAD) ցածր տոկոսով վարկեր ու դրամաշնորհներ է տրամադրում շատ աղքատ գյուղական բնակչությանը: 1978թ. ի վեր ԳԶՄՀ-ն ավելի քան 10 միլիարդ դոլար է ներդրել, օգնելով ավելի քան 300 միլիոն կանանց ու տղամարդկանց՝ բարձրացնելու իրենց եկամուտները և ապահովելու իրենց ընտանիքները: Այսօր ԳԶՄՀ-ն օժանդակում է ավելի քան 200 ծրագրի ու նախագծի 81 զարգացող երկրում:

## 19 Կանանց բարեկեցության խթանում



Միավորված ազգերի կազմակերպությունն օժանդակել է կանանց հավասարության և բարեկեցության խթանմանը: ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը (ՄԱԿԶՀ/UNIFEM) աջակցում է ծրագրերի իրականացմանը ավելի քան 100 երկրում, որոնց նպատակն է վերացնել կանանց նկատմամբ բռնությունը, կանխել ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի տարածումը: Այն նաև խթանում է կանանց քաղաքական մասնակցությունը և օժանդակում նրանց տնտեսական ապահովությանը, ինչպես օրինակ՝ մեծացնում է կանանց աշխատանքի ընդունման հնարավորությունները և նրանց իրավունքները հողի ու ժառանգության նկատմամբ: Կանանց առաջխաղացման ուսումնական և գիտահետազոտական միջազգային ինստիտուտը (ԿԱՈՒԳՄԻ/INSTRAW) օգնում է կանանց կյանքի բարելավմանն ու նրանց իրավունքների խթանմանը, իրականացնում է հետազոտական ու կարողությունների հզորացման աշխատանքներ անվտանգության, միգրացիայի ու կառավարման վերաբերյալ: ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները պետք է հաշվի առնեն կանանց կարիքները:



## 20 Վերարտադրողական և մայրական առողջության խթանում

Ընտանիքի պլանավորման կամավոր ծրագրերի միջոցով խթանելով անհատի՝ քանի երեխա, ինչքան ընդմիջումով և երբ ունենալու սեփական որոշման իրավունքը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը (ՄԱԲՀ/UNFPA) օգնել է մարդկանց կատարել իրազեկ ընտրություն և հնարավորություն է ընձեռել ընտանիքներին, հատկապես կանանց, վերահսկելու իրենց ապրելակերպը: Արդյունքն այն է, որ զարգացող երկրներում կանայք ավելի քիչ երեխա են ունենում (1960-ականների վեց երեխայի ցուցանիշն այսօր իջել է մինչև երեքի)՝ դանդաղեցնելով մոլորակի բնակչության աճը: Որքան քիչ չպլանավորած հղիություններ, այնքան քիչ մայրական մահացություն և քիչ վտանգավոր արհեստական վիժումներ: 1969թ., երբ ՄԱԲՀ-ն սկսել է իր գործունեությունը, ամուսնացած զույգերի ընդամենը 20 տոկոսն էր կիրառում ընտանիքի պլանավորման պրակտիկան: Այդ ցուցանիշն այսօր հասել է 63 տոկոսի: ՄԱԲՀ-ն իր մի շարք գործընկերների հետ նաև մասնագիտացված օգնություն է ապահովում ծննդաբերության ժամանակ և բարձրակարգ մանկաբարձական օգնություն՝ արտակարգ իրավիճակներում մայրերի մահացության դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով:

## 21 Մաքուր խմելու ջրի ապահովում



ՄԱԿ-ի ջրի առաջին տասնամյակի (1981-1990թթ.) ընթացքում ավելի քան 1 միլիարդ մարդ իր կյանքում առաջին անգամ հնարավորություն ստացավ օգտվելու ապահով խմելու ջրից: Մինչև 2002 թվականը ևս 1,1 միլիարդ մարդու ապահով խմելու ջրից օգտվելու հնարավորություն ընձեռվեց: 2003թ. անցկացվող Քաղցրահամ ջրի միջազգային տարին մեծապես նպաստեց այդ թանկագին բնական պաշարի պահպանության կարևորության մասին իրազեկության բարձրացման գործին: Ջրի միջազգային երկրորդ տասնամյակը (2005-2015թթ.) նպատակ ունի կիսով չափ նվազեցնել ապահով խմելու ջրից օգտվելու հնարավորություն չունեցող մարդկանց թիվը:





## 22 Արձագանք ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին

Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՅ համատեղ ծրագիրը (ՄԱ-ՁԻԱՅ/UNAIDS) համակարգում է աշխարհում ձեռնարկվող գործողությունները մի համաճարակի դեմ, որից տառապում է շուրջ 33 միլիոն մարդ: Ծրագիրը գործում է ավելի քան 80 երկրում՝ ապահովելով ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունների համընդհանուր մատչելիությունը, ինչպես նաև նվազեցնելով անհատների ու համայնքների խոցելիությունը ու թեթևացնելով համաճարակի ազդեցությունը: ՄԱՁԻԱՅ ծրագիրը միավորում է ՄԱԿ-ի 10 համահովանավոր կազմակերպությունների փորձագիտությունը:

## 23 Կարմրուկի վերացում



Տասներեքամյա պայքարից հետո 1980թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը (ԱԶԿ/WHO) հաջողվեց մոլորակի երեսից իսպառ վերացնել կարմրուկը: Դրա վերացման, ուստի և պատվաստման ու վերահսկողության աշխատանքների ավարտման շնորհիվ գոյացած առողջապահական խնայողությունները տարեկան կտրվածքով կազմում են շուրջ 1 միլիարդ դոլար, որը երեք անգամ գերազանցում է այդ աղետալի հիվանդության վերացմանն ուղղված բուն ծախսերը:



## 24 Մանկական պոլիոմիելիտի վերացում

Պոլիոմիելիտը հիմնովին վերացել է աշխարհի բոլոր երկրներում (բացի չորսից՝ Աֆղանստան, Յնդկաստան, Նիգերիա և Պակիստան), որպես արդյունք պոլիոմիելիտի համընդհանուր վերացման նախաձեռնության, որն աշխարհում մինչ օրս ձեռնարկված խոշորագույն առողջապահական ծրագիրն է: Այդ նախաձեռնության շնորհիվ, որը գլխավորում էին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, Rotary Միջազգայինը և Ամերիկայի Միացյալ Նահանգների Հիվանդությունների հսկողության և կանխարգելման կենտրոնները, շուրջ 5 միլիոն երեխա, որոնք անդամալույծ կլինեին, եթե չլիներ այս ծրագիրը, այսօր քայլում են: Մի հիվանդություն, որն աշխարհի 125 երկրում անդամալույծ է դարձրել անհամար երեխաների, արդեն հիմնովին վերանալու եզրին է:

## 25 Պայքար անտեսվող արևադարձային հիվանդությունների դեմ



Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաձեռնած ծրագրի արդյունքում Արևմտյան Աֆրիկայի 10 պետությունում վերացվեց գետային կուրություն հիվանդությունը (**onchocerciasis**), իսկ 25 միլիոն հեկտարի հասնող բերրի հողատարածքներ ազատվեցին գյուղատնտեսական աշխատանքների համար: Այսօր Աֆրիկյան գետային կուրության վերահսկման ծրագրի շրջանակներում հիվանդությունը վերահսկվում է ևս 19 երկրում: ՄԱԿ-ի գործակալությունների ջանքերի շնորհիվ 1991թ. Յյուսիսային Աֆրիկայում վերջ տրվեց գարշելի պտուտաորդին՝ մի մակաբույծի, որը սնվում է մարդու և կենդանիների մսով: Գվինեական որդի հիվանդությունը (**dracunculiasis**) վերացման եզրին է, մինչ այլ անհետացող հիվանդություններ, ինչպես օրինակ բորոտությունը, որը 122 երկրներից 116-ում վերացել է, իսկ լիմֆատիկ ֆիլարիատոզը, շիստոսոմիոզը և քնախտը (աֆրիկյան մարդկային տրիպանոսոմիոզ) այժմ վերահսկվում են:



## 26 Համաճարակների տարածման կանխում

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն (ԱՀԿ/WHO) օգնել է կանխել ատիպիկ թոքաբորբի (SARS) տարածումը: 2003թ. մարտին այն թողարկեց գլոբալ զգոնության և արտակարգ իրավիճակների խորհուրդների գրքույկ ճանապարհորդողների համար, և նրա օգնությամբ կանգնեցվեց այս նոր հիվանդությունը, որը հավակնում էր դառնալ համաշխարհային համաճարակ: Ամեն տարի ԱՀԿ-ն հետազոտում է համաճարակների բռնկման 200 դեպք, որից 20-ից 15-ի դեպքում անհրաժեշտ է լինում միջազգային միջամտություն: ԱՀԿ-ն ղեկավարում է գլոբալ պայքարը շատ տարածված որոշ այլ հիվանդությունների՝ միսինգիտի, դեղնախտի, խոլերայի և գրիպի դեպքում:

## 27 Համընդհանուր պատվաստումների կարևորում



Պատվաստումը փրկում է ավելի քան երկու միլիոն կյանք ամեն տարի: ԱՅԿ-ի, ՄԱՄԻ-ի, այլ կազմակերպությունների ու կառավարությունների ջանքերի շնորհիվ աշխարհի երեխաների մոտավորապես տոկոսը (1980թ. 20 տոկոսի փոխարեն) պատվաստվում են դիֆթերիա-պերտուսիս-տետանուսի վակցինայով: 2000-2006թթ. ընթացքում կարմրուկից մահացության դեպքերի թիվը Աֆրիկայում նվազել է 91տոկոսով, իսկ աշխարհում 2/3-ի չափով: Նոր վակցինաների կիրառման արգելքները աստիճանաբար հաղթահարվում են, և պատվաստումների ժամանակ առաջ եկած կապերի շնորհիվ օժանդակություն է ձեռք բերվում լրացուցիչ կյանքեր փրկելու, ինչպես օրինակ՝ ինսեկտիցիդի կիրառման ցանցերը՝ պաշտպանվելու մալարիայից և A վիտամինի տարատեսակների մատակարարումը՝ թերսնման դեմ պայքարում:



## 28 Մանկական մահացության նվազեցում

1990թ. մինչև հինգ տարեկան յուրաքանչյուր 10 երեխայից մեկը մահանում էր: ՄԱԿ-ի գործակալությունների՝ ջրազրկման դեմ օրալ թերապիայի, պարզ ջրի և սանիտար-հիգիենիկ պայմանների բարելավման, ինչպես նաև առողջապահական և սնուցման այլ ձեռնարկումների միջոցով զարգացող երկրներում 2006 թվականին երեխաների մահացության ցուցիչն ընկել է՝ դառնալով 12-ից 1-ը հարաբերության: Այժմ ՄԱԿ-ի նպատակն է մինչև հինգ տարեկան երեխաների մահացության 1990 թվականի ցուցանիշը մինչև 2015 թվականը նվազեցնել երկու երրորդով:

## 29 Բիզնեսի համար նախադրյալների ստեղծում



ՄԱԿ-ը բեղմնավոր աշխատանք է կատարել բիզնեսի բնագավառում: Բանակցությունների ճանապարհով սահմանելով միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափորոշիչներ այնպիսի տարատեսակ ոլորտներում, ինչպիսիք են վիճակագրությունը, առևտրի իրավունքը, մաքսային ընթացակարգերը, մտավոր սեփականությունը, օդագնացությունը, նավագնացությունը և հեռահաղորդակցությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը համաշխարհային տնտեսության համար ստեղծել է «նուրբ ենթակառուցվածք»՝ հեշտացնելով տնտեսական գործունեությունը և կրճատելով գործառնական ծախսերը: ՄԱԿ-ը նախադրյալներ է ստեղծել զարգացող տնտեսություններում ներդրումներ կատարելու համար՝ աջակցելով քաղաքական կայունությանը և պատշաճ կառավարման գործելակերպին, պայքարելով կոռուպցիայի դեմ և քարոզելով առողջ տնտեսական քաղաքականություն և բիզնեսի զարգացման համար նպաստավոր օրենսդրական դաշտ:





## 30 Չարգացող երկրների արդյունաբերության աջակցություն

ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ/UNIDO) ծառայել է որպես «միջնորդ» հյուսիս-հարավ և հարավ-հարավ արդյունաբերական համագործակցության համար՝ խթանելով ձեռներեցությունը, ներդրումները, տեխնոլոգիաների փոխանցումը, ծախսարդյունավետ և կայուն արդյունաբերական զարգացումը: Կազմակերպությունն օգնել է անդամ պետություններին սահուն կերպով իրականացնել գլոբալացման գործընթացը և նվազեցնել աղքատությունը:

## 31 Օգնություն աղետներից տուժածներին



Տարերային աղետների ժամանակ կամ բարդ արտակարգ իրավիճակներում ՄԱԿ-ը համակարգում և համախմբում է տուժածներին ցուցաբերվող օգնությունը: Աշխատելով կառավարությունների, Կարմիր խաչ/Կարմիր մահիկ շարժման, ինչպես նաև մարդասիրական օգնությամբ զբաղվող այլ խոշորագույն կազմակերպությունների ու դոնորների հետ՝ ՄԱԿ-ը տեղ է հասցնում այնքան սպասված մարդասիրական օգնությունը: ՄԱԿ-ի դիմումներով ամեն տարի արտակարգ իրավիճակների օգնության նպատակով հանգանակվում է մի քանի միլիարդ դոլար:



## 32 Բնական աղետների ազդեցության նվազեցում

Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպության (ՕՐԿ/ՎՄՄՕ) աշխատանքի շնորհիվ միլիոնավոր մարդիկ փրկվել են բնական և մարդածին աղետների կործանարար ազդեցությունից: ՕՐԿ-ի վաղաժամ ահազանգման համակարգի շնորհիվ, որի մեջ մտնում են հազարավոր մակերևութային մոնիտորներ և արբանյակներ, հնարավոր է դարձել առավել մեծ ճշգրտությամբ կանխատեսել եղանակի հետ կապված աղետները, ստանալ տեղեկատվություն նավթի արտահոսքերի ծավալների, ինչպես նաև քիմիական ու ռադիոակտիվ նյութերի արտահոսքերի մասին, կանխագուշակել երկարատև երաշտները: Այդ համակարգի օգնությամբ հնարավոր է դարձել երաշտից տուժած շրջաններին տրամադրվող սնունդը բաշխել առավել մեծ արդյունավետությամբ:

### 33 Օգնություն ցունամիից տուժածներին



2004թ. դեկտեմբերի 26-ին Հնդկական օվկիանոսում տեղի ունեցած կործանարար ցունամիից հետո 24 ժամվա ընթացքում ՄԱԿ-ի աղետների գնահատման և համակարգման խմբեր ուղարկվեցին: Միավորված ազգերի կազմակերպությունն իսկույն ևեթ անցավ գործողությունների՝ օգնելով աղետից փրկվածներին, սնունդ բաժանելով ավելի քան 1,7 միլիոն մարդկանց, կացարան ապահովելով շուրջ 1,1 միլիոն անօթևանների, խմելու ջուր մատակարարելով 1 միլիոնից ավելի փրկվածների, կարմրուկի դեմ պատվաստելով ավելի քան 1,2 միլիոն երեխաների: Եվ այս ամենը փրկարարական գործողությունների առաջին վեց ամիսների ընթացքում: Մարդասիրական օգնության անհապաղ և արդյունավետ կազմակերպման շնորհիվ նախնական ավերածության զրկանքների պատճառով լրացուցիչ զոհեր չեղան և համաճարակի բռնկումը կանխվեց:



## 34 Օգոնային շերտի պահպանություն

ՄԱԿ-ի Շջակա միջավայրի ծրագիրը (ՄԱՇՄԾ/UNEP) և Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպությունը (ՕՉԿ) հսկայածավալ աշխատանք են կատարել երկիր մոլորակի օգոնային շերտին հասցված վնասի մասին մարդկությանը ահազանգելու և զգոնացնելու գործում: «Մոնրեալի արձանագրություն» կոչվող համաձայնագրի հիման վրա աշխարհի պետություններն աստիճանաբար արտադրությունից և գործածությունից հանում են այն քիմիական նյութերը, որոնք առաջ են բերում օգոնային շերտի քայքայում: Դրանք փոխարինվում են ավելի անվնաս նյութերով: Այս նախաձեռնությունը կարող է միլիոնավոր մարդկանց փրկել մաշկի քաղցկեղով հիվանդանալուց, որը չափից ավելի ուլտրամանուշակագույն ճառագայթման ենթարկվելու հետևանք է:

## 35 Ականազերծում



Միավորված ազգերի կազմակերպությունը ականազերծման աշխատանքներ է իրականացնում 42 երկրում կամ տարածքում, այդ թվում՝ Աֆղանստանում, Անգոլայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Իրաքում, Մոզամբիկում և Սուդանում: Ականներից ամեն տարի զոհվում կամ անդամալուծ են դառնում հազարավոր քաղաքացիներ: ՄԱԿ-ը նաև սովորեցնում է՝ ինչպես հեռու մնալ վնասվելուց, օգնում ականներից վիրավորվածներին՝ ապրելու ինքնուրույն կյանքով, աջակցում պետություններին՝ ոչնչացնելու ականների պաշարները և ականներին վերաբերող պայմանագրերին լիակատար միջազգային մասնակցության կոչ է անում:



## 36 Մթերքի մատակարարում ամենակարիքավորներին

Ամեն տարի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՅԾ/WFP)՝ աշխարհի մարդասիրական օգնությամբ զբաղվող խոշորագույն կազմակերպությունը, օգնություն է հասցնում 80 երկրի շուրջ 90 միլիոն սովյալների, այդ թվում՝ փախստականների ու ներքին տեղահանման ենթարկվածների մի սովար մասի: ՊՅԾ-ի պարենային օգնությունը նախատեսված է բավարարելու սովյալների՝ հատկապես կանանց և երեխաների հատուկ կարիքները՝ առավել հաճախ սովահարության վտանգին ենթարկվող խոցելի մեծամասնությունը: ՊՅԾ-ն փորձում է վերացնել սովի արմատները՝ կենտրոնանալով ամենաաղքատ և թերսնված մարդկանց վրա: Դպրոցական պարենային ծրագրերի ընթացքում անվճար ճաշ է տրամադրվել ավելի քան 20 միլիոն դպրոցականների, ընդ որում մեկ ճաշի արժեքը կազմել է ընդամենը 25 ամերիկյան ցենտ: Կազմակերպության նյութատեխնիկական փորձառությունը հնարավոր է դարձնում օգնություն հասցնել ամենաաղժվար և վտանգավոր իրավիճակներում: Մասնաճյուղերում ունենալով իր անձնակազմի ավելի քան 90տոկոսը՝ ՊՅԾ-ն օգտագործում է օդանավերի, նավերի, ուղղաթիռների բեռնատարների համընդհանուր մի ցանց և, անհրաժեշտության դեպքում, ավանակներ, ուղտեր և փղեր՝ հասնելու ամենաշատը կարիքի մեջ գտնվողներին: ՊՅԾ-ն ծառայում է որպես սովյալների պաշտպան՝ հասարակ մարդկանց ուղերձը փոխանցելով աշխարհի քաղաքական ղեկավարներին:

## 37 Պայքար սովի դեմ



ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ/FAO) ղեկավարում է սովի դեմ պայքարի միջազգային մասշտաբի գործողությունները: Համընդհանուր պարենային ապահովության նպատակը, այն է՝ մարդկանց ակտիվ, առողջ կյանք վարելու համար ամենուր կանոնավոր կերպով հասանելի բավարար չափով բարձրորակ սնունդ ունենալը, իր ամբողջ աշխատանքի առանցքն է: Իր գործունեությունը ծավալելով ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում, ՊԳԿ-ն ծառայում է որպես չեզոք ֆորում, որտեղ հավասար իրավունքներով կարող են հանդիպել բոլոր ազգերը՝ բանակցելու, համաձայնագրեր կնքելու և վիճարկելու առկա ռազմավարությունները: ՊԳԿ-ն օգնում է նաև զարգացող պետություններին արդիականացնել և կատարելագործել գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնաբուծությունը այնպիսի միջոցներով, որ պահպանվեն բնական ռեսուրսները և բարելավվի սնուցումը:





## 38 Ձկնային պաշարի սպառման կանխում

Սպառման ենթակա համաշխարհային ձկնային պաշարի 70 տոկոսը շահագործվել է մինչև իր նվազագույն սահմանագիծ և նույնիսկ՝ ավելի: ՊԳԿ-ն վերահսկում է համընդհանուր ձկնորսության և վայրի ձկնային պաշարների իրավիճակը և աշխատում է երկրների հետ՝ բարելավելու ձկնորսության վերահսկումը, վերացնելու անօրինական ձկնորսությունը, նպաստելու ձկան միջազգային առևտրին և պաշտպանելու վտանգված կենսատեսակներն ու շրջակա միջավայրը:

## 39 Թունաքիմիկատների արգելում



Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիայի նպատակն է աշխարհն ազատել երբևէ ստեղծված մի շարք խիստ վտանգավոր թունաքիմիկատներից: 150 երկրների կողմից վավերացված այս կոնվենցիայի թիրախը 12 վտանգավոր պեստիցիդներն ու արդյունաբերական քիմիկատներն են, որոնք կարող են մարդկանց մահվան պատճառ դառնալ, վնաս հասցնել նյարդային և իմունային համակարգերին, առաջացնել քաղցկեղ և վերարտադրողական ֆունկցիայի խանգարումներ, ազդել երեխաների զարգացման վրա: ՄԱԿ-ի կոնվենցիաներն ու գործողությունների ծրագրերն օգնում են պահպանել կենսաբազմազանությունը, պահպանել անհետացման վտանգի եզրին գտնվող կենսատեսակները, պայքարել անապատացման դեմ, մաքրել ծովերը և կանխել վտանգավոր արտանետումների անդրսահմանային շարժումը:



## 40 Սպառողների առողջության պահպանում

Շուկայում վաճառվող սննդամթերքի անվտանգությունն ապահովելու նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, անդամ պետությունների հետ համագործակցելով, սահմանել են միջազգային չափորոշիչներ ավելի քան 230 պարենային ապրանքատեսակների համար, անվտանգության եզրագծեր՝ սննդի ավելի քան երեք հազար ադտոտիչների համար, ինչպես նաև կանոնակարգեր՝ սննդամթերքի մշակման, փոխադրման և պահեստավորման համար: Պիտակավորման և ապրանքների նկարագրության չափորոշիչների սահմանման նպատակն է սպառողներին զերծ պահել անեն տեսակի թյուրիմացություններից: Աշխարհում շրջանառվում է ավելի շատ սնունդ, քան երբևէ, և ՄԱԿ-ն աշխատում է երաշխավորել դրա անվտանգությունը:

## 41 Պայքար ահաբեկչության դեմ



Անդամ երկրները հակաահաբեկչական գործողությունների իրենց ջանքերը համակարգում են ՄԱԿ-ի միջոցով: 2006թ. ՄԱԿ-ն ընդունեց ահաբեկչության դեմ պայքարի համընդհանուր ռազմավարություն. առաջին անգամ էր, երբ երկրներն ընտրեցին ահաբեկչության դեմ պայքարի մեկ ընդհանուր մոտեցում: ՄԱԿ-ի գործակալություններն ու ծրագրերն օգնել են երկրներին գործի դնել ընդհանուր ռազմավարությունը՝ ապահովելով օրինական աջակցություն և զարգացնելով ահաբեկչության դեմ պայքարի միջազգային համագործակցություն: ՄԱԿ-ը նաև սահմանել է միջազգային ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրական դաշտ: ՄԱԿ-ի հովանու տակ մշակվել են համաշխարհային օրենսդրության 16 իրավական փաստաթուղթ, այդ թվում՝ համաձայնագրեր պատանդ վերցնելու, ինքնաթիռների առևանգման, ահաբեկչական ռմբակոծումների, ահաբեկչության ֆինանսավորման և, բոլորովին վերջերս, միջուկային ահաբեկչության դեմ:



## 42 Միջազգային խոշորամասշտաբ տարածայնությունների իրավական լուծումների իրականացում

Տալով իր եզրակացություններն ու խորհրդատվական կարծիքը՝ Արդարադատության միջազգային դատարանն (ԱՄԴ/ԻԸԵ) օգնել է հարթել միջազգային մասշտաբի բազմաթիվ տարածայնություններ, այդ թվում՝ տարածքային վեճեր, ժովային սահմաններ, դիվանագիտական հարաբերություններ, պետական պատասխանատվություն, օտարերկրացիների հանդեպ վերաբերմունքը և ուժի գործադրումը:

## 43 Միջազգային առևտրական կապերի բարելավում



ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (ՄԱԱԶՀ/UNCTAD) աջակցում է զարգացող երկրներին՝ բանակցելու առևտրական համաձայնագրերի շուրջ և ստանալու արտոնյալ պայմաններ արտահանման համար: Միջազգային ապրանքային պայմանագրերի շրջանակներում ՄԱԱԶՀ-ն մասնակցել է մի շարք բանակցությունների՝ զարգացող երկրների համար ապահովելով արդարացի գնային պայմաններ, բարելավել է այդ երկրների առևտրի ենթակառուցվածքների արդյունավետությունը, այլ միջոցներով օգնել նրանց՝ բազմազանեցնելու իրենց արտադրանքը և ինտեգրվելու միջազգային տնտեսությանը:



## 44 Տնտեսական բարեփոխումների խթանում

Համաշխարհային բանկը (ՀԲ/ՄԵ) և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ/IMF) օգնել են բազմաթիվ երկրների՝ բարելավելու տնտեսական կառավարման ոլորտը, տրամադրել են ժամանակավոր ֆինանսական աջակցություն՝ հաղթահարելու վճարումների բալանսի հետ կապված դժվարությունները, կազմակերպել են վերապատրաստման դասընթացներ ֆինանսական հարցերով զբաղվող պետական պաշտոնյաների համար:

## 45 Համաշխարհային օվկիանոսում կայունության և կարգուկանոնի հաստատում



ՄԱԿ-ը գլխավորել է օվկիանոսների օգտագործման հարցերը մի միասնական կոնվենցիայով կարգավորելու միջազգային ջանքերը: Ծովային օրենքի մասին 1982թ. ՄԱԿ-ի կոնվենցիան, որն ընդունվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, պատմության մեջ առաջին անգամ միջազգային օրենսդրական դաշտ է ստեղծում օվկիանոսներում և ծովերում ամեն տեսակի գործողությունների կարգավորման համար: Կոնվենցիայով սահմանվում են հատուկ կանոններ ծովային գոտիների հաստատման, մերձափնյա և ցամաքով շրջապատված պետությունների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, ներառյալ ծովագնացության, ծովային միջավայրի պաշտպանության, ծովում կատարվող գիտական հետազոտությունների և կենդանի ռեսուրսների պահպանության ու խնայողական օգտագործման հետ առնչվող պարտավորությունները: Համաձայնագիրը ներառում է վեճերի կարգավորման մեխանիզմներ:





## 46 Ծովագնացության և օդագնացության բարելավում

ՄԱԿ-ի գործակալությունները պատասխանատու են ծովագնացության և օդագնացության երթևեկության անվտանգության չափորոշիչների սահմանման համար: ՄԱԿ-ի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ՔԱՄԿ/ICAO) մեծ ներդրում ունի օդային երթևեկությունը տեղափոխումների ամենաապահով եղանակը դարձնելու գործում: 1947թ. օդային փոխադրամիջոցներից օգտված 21 միլիոն մարդուց ինքնաթիռային վթարներից զոհվել է 590 մարդ: 2007թ. դրությամբ օդով ճանապարհորդող 2,2 միլիարդ ուղևորներից վթարների պատճառով զոհվել է 581 մարդ: Նույն սկզբունքով ՄԱԿ-ի Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ/IMO) ջանում է ծովերը դարձնել առավել մաքուր, ծովային տեղափոխումը՝ առավել ապահով և անվտանգ: Վիճակագրությունը վկայում է, որ նավագնացությունը հետզհետե դառնում է ավելի ապահով, և ավելի քիչ վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Նավաբեկությունների թիվը աստիճանաբար նվազում է, մահացության դեպքերը կրճատվում են, աղտոտման դեպքերը նվազել են, ընդհանուր նավթային արտահոսքերի աղտոտումը նույնպես նվազել է, օդի և կոյուղու արտանետման հետ կապված աղտոտման հարցերը ուշադրության կենտրոնում են, իսկ ծովով բեռնափոխադրումների թիվը շարունակաբար աճում է:

## 47 Պայքար միջազգային հանցագործության դեմ



ՄԱԿ-ի Թմրանյութերի վերահսկման և հանցագործությունների կանխման գրասենյակը (ԹՎՅԿԳ/UNODC) համագործակցում է անդամ պետությունների և կազմակերպությունների հետ՝ դիմակայելու միջազգային կազմակերպված հանցագործությանը՝ իրավական ու տեխնիկական միջոցներ տրամադրելով պայքարելու կոռուպցիայի, անօրինական փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի տեղափոխման, անօրինական միգրանտների դեմ, ինչպես նաև հզորացնելով քրեական արդարադատության համակարգը: Այն օգնում է երկրներին կանխել ահաբեկչությունը, այն գլխավոր դեր ունի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում և Համաշխարհային բանկի հետ միասին օգնում է երկրներին՝ վերականգնել կոռումպացված ղեկավարների կողմից գողացված միջոցները: Այն կարևոր դեր է խաղացել այնպիսի համապատասխան միջազգային պայմանագրերի իրականացման գործում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան և Անդրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ կոնվենցիան:



## 48 Անօրինական թմրանյութերի հիմնախնդրի լուծում

ՄԱԿ-ի թմրանյութերի վերահսկման և հանցագործությունների կանխման գրասենյակն (ԹՎՅԿԳ/ODCCP) աշխատում է կրճատել անօրինական թմրանյութերի մատակարարումն ու դրանց պահանջարկը՝ հիմնվելով թմրանյութերի վերահսկման մասին ՄԱԿ-ի երեք կոնվենցիաների վրա: Գրասենյակն աշխատում է երկրների հետ՝ բարելավելու հանրային առողջությունը, ինչպես նաև հանրային անվտանգությունը, որպեսզի կանխի, բուժի և հսկի թմրանյութերի չարաշահումը: Թմրամիջոցների համընդհանուր խնդիրը լուծելու ջանքերը շրջադարձել են թմրանյութերի չարաշահման 25 տարիների վերելքը և հանգեցրել համաճարակի անկմանը: Ինչևէ, որոշ երկրներ և շրջաններ դեռ խոցելի են թմրանյութերի մշակման և ապօրինի տեղափոխման առաջացրած անկայուն վիճակից: Ահա, թե ինչու գրասենյակը թմրանյութերի հսկման իր աշխատանքները ծավալում է Աֆղանստանում, Անդյան երկրներում, Կենտրոնական Ասիայում, Մյանմա-րում և Արևմտյան Աֆրիկայում:

## 49 Արժանավայել աշխատանքի խրախուսում



Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ/ILO) հաստատել է աշխատանքին առնչվող միջազգային չափանիշներն ու հիմնարար սկզբունքները, ինչպես նաև աշխատանքի իրավունքները, որոնցում միավորումներ կազմելու ազատությունը, համատեղ գործարքներ կնքելու իրավունքը, հարկադրական աշխատանքի վերացումը, երեխաների աշխատանքի արգելումը և աշխատավայրում խտրականության կանխումը: Աշխատանքում առաջխաղացումը, համատարած սոցիալական պաշտպանությունը, ինչպես նաև կառավարության և աշխատավորների ու գործատուների կազմակերպությունների միջև առողջ երկխոսության ապահովումը Աշխատանքի միջազգային կազմակերպության գործունեության առանցքն են:



## 50 Գրագիտության և կրթության բարելավում զարգացող երկրներում

Այսօր զարգացող երկրների չափահաս բնակչության 83 տոկոսը կարող է կարդալ և գրել, իսկ անչափահաս երեխաների 84 տոկոսը հաճախում է տարրական դպրոց: Ներկայիս առաջնահերթ նպատակն է ապահովել, որ մինչև 2015թ. բոլոր երեխաներն ավարտեն տարրական դպրոցի լիարժեք դասընթացը: Կանանց կրթությանն ու առաջխաղացմանն ուղղված ծրագրերն օգնել են զարգացող երկրներում կանանց գրագիտության աստիճանը 1970թ. գրանցված 36 տոկոսը 2007թ. հասցնել մինչև 79 տոկոսի: Հաջորդ խնդիրն այն է, որ մինչև 2015թ. բոլոր աղջիկներն ավարտեն տարրական և միջնակարգ դպրոցը:

## 51 Համաշխարհային պարտավորությունների ստանձնում՝ ի նպաստ երեխաների



ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, Աֆղանստանից մինչև Լիբանան և Սուդանից մինչև նախկին Հարավսլավիա, ղեկավարել է այսպես կոչված «խաղաղ օրերի հաստատման» և «խաղաղ միջանցքների բացման» միջոցառումներ, որպեսզի պատվաստանյութեր, ուրիշ անհրաժեշտ օգնություն հասցվի զինված հակամարտությունների բռնում հայտնված և դրանց խիստ կարիքն զգացող երեխաներին: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան այսօր օրենքի ուժ է ստացել 193 պետությունում: 2002թ. ՄԱԿ-ի՝ երեխաներին նվիրված հատուկ նստաշրջանից հետո 190 երկրի կառավարություններ ստանձնեցին մի շարք ժամկետավոր պարտավորություններ առողջապահության, կրթության, դաժան վերաբերմունքից երեխաների պաշտպանության, երեխաների շահագործման և նրանց նկատմամբ բռնությունների արգելման, ինչպես նաև ՄԻԱԿ/ՉԻԱԳ-ի դեմ պայքարի վերաբերյալ:



## 52 Պատմա-մշակութային, ճարտարապետական և բնական կոթողների պահպանում

ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ/UNESCO) աջակցել է 137 երկրների կառավարությունների՝ պահպանելու հնագույն հուշարձանները և պատմա-մշակութային ու բնության կոթողները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ կնքվել են մի շարք միջազգային համաձայնագրեր՝ պահպանելու մշակութային սեփականությունը, մշակութային բազմազանությունը և բարձրարժեք մշակութային և բնական կոթողները: Այսպիսի ավելի քան 850 բացառիկ համընդհանուր արժեք ունեցող կոթողներ են ընտրվել:

## 53 Կրթական և մշակութային փոխանակման խրախուսում



Իր տարբեր կառույցների՝ մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի համալսարանի միջոցով Միավորված ազգերի կազմակերպությունը մշտապես խրախուսել է կրթական և գիտական համագործակցությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցերի կազմավորման և մշակութային արտահայտչաձևերի խթանման գործընթացը, այդ թվում նաև՝ ազգային փոքրամասնությունների և տեղաբնիկ ժողովուրդների համար:





## 54 Ստեղծագործական և նորարարական կարողությունների քաջալերում

ՄԱԿ-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՐԿ/WIPO) խթանում է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը և երաշխավորում, որ բոլոր երկրներն օգտագործեն արդյունավետ մտավոր սեփականության համակարգի օգուտները: Մտավոր սեփականությունը, որն ի սկզբանե գյուտարարներին ու ստեղծագործողներին իրենց տաղանդի համար ճանաչվելու և վարձատրվելու մշակված մեխանիզմ է, օգնում է խթանել զարգացումն ու հարստություն կուտակել: Մտավոր սեփականության համակարգում հիմնված խթանիչները գործում են որպես մարդկային ստեղծագործական կարողությունների շարժառիթ՝ առաջ տանելով գիտության և տեխնոլոգիաների սահմանները և հարստացնելով գրականության ու արվեստի աշխարհը:

## 55 Մամուլի և խոսքի ազատության խթանում



Բոլոր մարդկանց գրաքննությունից զերծ և մշակութային տեսանկյունից տարատեսակ տեղեկատվություն հասցնելու նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ն օժանդակում է լրատվամիջոցների զարգացմանն ու կատարելագործմանը, օգնում անկախ թերթերին, հեռարձակողներին: ՅՈՒՆԵՍԿՕ-ն հանդես է գալիս որպես մամուլի ազատության հսկիչ և հրապարակայնորեն դատապարտում այնպիսի լուրջ խախտումներ, ինչպիսիք են լրագրողների սպանությունը և ազատագրկումը:



## 56 Հետնախորշերի վերափոխում արժանավայել մարդկային բնակավայրերի

Երկրագնդի բնակչության կեսն այսօր ապրում է քաղաքներում: Քաղաքն այսօր համազգային արտադրության և սպառման հիմնական կենտրոնն է, որտեղ առկա են հարստության և բարգավաճման տանող տնտեսական ու սոցիալական գրեթե բոլոր գործընթացները: Սակայն քաղաքներում են կենտրոնացած նաև հիվանդությունները, հանցագործությունները, աղտոտումն ու չքավորությունը: Շատ քաղաքներում, հատկապես զարգացող երկրներում, բնակչության մոտ 50 տոկոսն ապրում է հետնախորշերում՝ զուրկ կացարանից, ջրից ու սանիտարահիգիենիկ պայմաններից: ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագրի (ՀԱԲԻՏԱՍ/HABITAT) ավելի քան 150 տեխնիկական ծրագրերն ու նախագծերը, որոնք իրականացվում են աշխարհի 50 երկրում կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, փորձում են գտնել նորարարական լուծումներ մեծ ու փոքր քաղաքների հիմնախնդիրները լուծելու համար: Այդ ծրագրերից են քաղաքաբնակ աղքատներին ժամանակավոր կացարաններով ապահովելը, որն էլ իր հերթին կխթանի ներդրումները աղքատների համար կացարաններ և առաջին անհրաժեշտության ծառայություններ ապահովելու համար:

## 57 Գլոբալ ցանցին տեղական հասանելիության ապահովում



Փոստային համընդհանուր միությունը (ՓՀՄ/ՍՍՄ) հեշտացնում է միջազգային նա-  
մակագրության փոխանակումը և զարգացնում է սոցիալական, մշակութային և  
առևտրական շփումները մարդկանց և ձեռներեցության միջև՝ ժամանակակից փոստա-  
յին ծառայություններով ու արտադրանքով: Աշխարհում 660 հազար փոստային գրա-  
սենյակ կազմում է աշխարհում տեղեկատվության, ապրանքների և դրամի  
փոխանցումը հեշտացնող ամենամեծ ցանցը: Ինտերնետն ու նոր տեխնոլոգիաները  
նոր հնարավորություններ են բացել փոստային ծառայությունների համար, հատկա-  
պես էլեկտրոնային առևտրի բնագավառում, քանի որ առցանց գնված ապրանքները  
դեռևս չեն կարող ուղարկվել էլեկտրոնային ձևով: Փոստը դեռևս կենսական կամուրջ է  
ֆիզիկական, թվային և ֆինանսական գործառույթների միջև և գլոբալ զարգացման հիմ-  
նական գործընկեր:



## 58 Սահմանափակ կարողություններով անձանց իրավունքների խթանում

Միավորված ազգերի կազմակերպությունը մշտապես եղել է սահմանափակ կարողություններով մարդկանց հավասար իրավունքների համար մղվող պայքարի առաջին շարքերում՝ քաջալերելով այդ մարդկանց մասնակցությունը սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում: ՄԱԿ-ը ցույց է տվել, որ սահմանափակ կարողություններով մարդիկ ռեսուրս են հասարակության համար, և մշակել է Կոնվենցիա սահմանափակ կարողություններով մարդկանց իրավունքների վերաբերյալ, որն ուժի մեջ է մտել 2008թ.:

## 59 Համաշխարհային հեռահաղորդակցության բարելավում



Հեռահաղորդակցության միջազգային միությունն (ՀՄՄ/ITU) աշխատում է միավորել անդամ պետություններին և արդյունաբերությանը՝ զարգացնելու և համակարգելու հեռահաղորդակցության համաշխարհային ցանցերի և ծառայությունների գործունեությունը: ՀՄՄ-ն կոորդինացրել է ռադիոտիրույթի հավասարաչափ օգտագործման գործընթացը, խթանել միջազգային համագործակցությունն արբանյակների ուղեծրերը որոշելու գործում, աշխատել զարգացող պետություններում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ և քննարկել միջազգային չափորոշիչների հարցերը, որոնց միջոցով հնարավոր է ապահովել հաղորդակցման համակարգերի վիթխարի ցանցի անխափան աշխատանքը: Լայնաշերտ ինտերնետից մինչև վերջին սերնդի անլար տեխնոլոգիաները, օդազնացությունից ու ծովազնացությունից մինչև ռադիոաստղագիտություն և արբանյակային օդերևութաբանություն, հեռախոսային ծառայություններից մինչև հեռուստատեսության հեռարձակում ու ապագա սերնդի ցանցեր. այս ամբողջ տիրույթում ՀՄՄ-ն հանձնառել է միավորել աշխարհը: Այս միության աշխատանքի շնորհիվ հեռահաղորդակցությունը դարձել է 1,3 տրիլիոն դոլար արժողությամբ գլոբալ արդյունաբերություն:



## 60 Տեղաբնիկ ժողովուրդների վիճակի բարելավում

Միավորված ազգերի կազմակերպության անդադրում ջանքերով բացահայտվել են այն անարդարությունները, որոնք կատարվել են աշխարհի 90 պետություններում ապրող շուրջ 370-ից 500 միլիոն տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ, որոնք այսօր համալրում են մոլորակի բնակչության ամենաընչազուրկ և ամենախոցելի խմբերի շարքերը: Տեղաբնիկ ժողովուրդների հարցերով զբաղվող 16 անդամից բաղկացած Մշտական ֆորումը, որ հիմնադրվեց 2000թ., փորձում է բարելավել տեղաբնիկ ժողովուրդների վիճակն ամբողջ աշխարհում զարգացման, մշակույթի, մարդու իրավունքների, շրջակա միջավայրի, կրթության և առողջապահության հետ կապված հարցերում:

## ՄԱԿ-ին շնորհված Խաղաղության Նոբելյան մրցանակները

- 2007թ.** Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական հանձնախմբին
- 2005թ.** Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը և նրա Գլխավոր տնօրեն Սոհամեդ էլբարադեին
- 2001թ.** Միավորված ազգերի կազմակերպությանը և նրա Գլխավոր քարտուղար Բոֆի Անանին
- 1988թ.** ՄԱԿ-ի Խաղաղապահ ուժերին
- 1981թ.** ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին
- 1969թ.** Աշխատանքի միջազգային կազմակերպությանը
- 1965թ.** ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամին
- 1961թ.** ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Դազ Յամարշյուլդին
- 1954թ.** ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին
- 1950թ.** ՄԱԿ-ի Խնամակալության բաժանմունքի տնօրեն՝ Ռալֆ Բանչին

Հազարամյակի զարգացման նպատակների մասին հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել ստորև բերված հասցեներում՝

[www.un.org/millenniumgoals](http://www.un.org/millenniumgoals)

[www.millenniumcampaign.org](http://www.millenniumcampaign.org)

[millenniumindicators.un.org](http://millenniumindicators.un.org)

Լրացուցիչ տեղեկություններ ՄԱԿ-ի գործունեության մասին տես՝

[www.un.org/works](http://www.un.org/works)

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մասին տես՝

[www.un.am](http://www.un.am)







## Միավորված ազգերի կազմակերպության համակարգը

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ/ILO) [www.ilo.org](http://www.ilo.org)  
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ/WHO) [www.who.org](http://www.who.org)  
Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ/WTO) [www.wto.org](http://www.wto.org)  
Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԵԳ/IAEA) [www.iaea.org](http://www.iaea.org)  
Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ/IMF) [www.imf.org](http://www.imf.org)  
Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (ԳՏՄՀ/IFAD) [www.ifad.org](http://www.ifad.org)  
Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (ԶՀԿ/WTO) [www.world-tourism.org](http://www.world-tourism.org)  
Ծովագնացության միջազգային կազմակերպություն (ԾՄԿ/IMO) [www.imo.org](http://www.imo.org)  
Կանանց առաջխաղացման ուսումնական և գիտահետազոտական միջազգային ինստիտուտ (ԿԱՌԳՍԻ/INSTRAW) [www.un-instraw.org](http://www.un-instraw.org)  
Համաշխարհային բանկի խումբ [www.worldbank.org](http://www.worldbank.org)  
Հեռահաղորդակցության միջազգային միություն (ՀՍՍ/ITU) [www.itu.int](http://www.itu.int)  
ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով (ՄԱԱԶՀ/UNCTAD) [www.unctad.org](http://www.unctad.org)  
ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ/UNIDO) [www.unido.org](http://www.unido.org)  
ՄԱԿ-ի Բնակավայրերի կենտրոն (Հարիտառ/UN-HABITAT) [www.unhabitat.org](http://www.unhabitat.org)  
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ/UNFPA) [www.unfpa.org](http://www.unfpa.org)  
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ/UNDP) [www.undp.org](http://www.undp.org)  
ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակ (ԹՀԿԳ/ODC) [www.unodc.org](http://www.unodc.org)  
ՄԱԿ-ի Կամավորներ (ՄԱԿԿ/UNV) [www.unv.org](http://www.unv.org)  
ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ (ՄԱԿԶՀ/UNIFEM) [www.unifem.org](http://www.unifem.org)  
ՄԱԿ-ի Կապիտալ զարգացման հիմնադրամ (ԿԶՀ/UNCDF) [www.uncdf.org](http://www.uncdf.org)  
ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ/UNESCO) [www.unesco.org](http://www.unesco.org)  
ՄԱԿ-ի Համալսարան (ՄԱՀ/UNU) [www.unu.edu](http://www.unu.edu)  
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՄԱՄՀ/UNICEF) [www.unicef.org](http://www.unicef.org)  
ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՀԳ/OHCHR) [www.ohchr.org](http://www.ohchr.org)  
ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալություն (ՄԱՕԱԳ/UNRWA) [www.unrwa.org](http://www.unrwa.org)  
ՄԱԿ-ի ՄԻՎԿ/ԶԻՎՀ-ի համատեղ ծրագիր (ՄԱԶԻՎՀ/UNAIDS) [www.unaids.org](http://www.unaids.org)  
ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (ՄԱՇՄ/UNEP) [www.unep.org](http://www.unep.org)  
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ/FAO) [www.fao.org](http://www.fao.org)  
ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱՓԳՀԳ/UNHCR) [www.unhcr.org](http://www.unhcr.org)  
Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրային կազմակերպություն (ՓՀԱՊԿ/CTBT) [www.ctbto.org](http://www.ctbto.org)  
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄԱՀԿ/WIPO) [www.wipo.int](http://www.wipo.int)  
Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ/WFP) [www.wfp.org](http://www.wfp.org)  
Փոստային համընդհանուր միություն (ՓՀՍ/UPU) [www.upu.int](http://www.upu.int)  
Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ՔԱՄԿ/ICAO) [www.icao.int](http://www.icao.int)  
Քիմիական զենքի արգելման կազմակերպություն (ՔՁԱԿ/OPCW) [www.opcw.org](http://www.opcw.org)  
Օրերուրաբաբանության համաշխարհային կազմակերպություն (ՕՀԿ/WMO) [www.wmo.ch](http://www.wmo.ch)



Պատրաստվել է տպագրության ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակի կողմից ՀՏՎ Տեղեկատվության կենտրոնի ծառայության աջակցությամբ: Թարգմանվել է նույնանուն անգլերեն գրքուկից:

Prepared for publication by UN Department of Public Information Yerevan Office with support from DPI Information Centre Service, and is a translation from “60 ways the United Nations makes a difference” brochure.

UN AN-1000-October, 2008  
UNO/DPI Yerevan/088